ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

00010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/41814-2019

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-252-13.08.2019-ՏՏԳԲ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի սեպտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1233 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Կատարող՝ Պ. Քացախյան

Հեռ. 010515686

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-252-13.08.2019-ՏՏԳԲ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը «Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-252-13.08.2019-ՏՏԳԲ-011/0) (այսուհետ՝ նախագիծ) վերաբերյալ:

1. Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող փոփոխությունն ընդունելի չէ, քանի որ Հայաստանի անտառները լեռնային են, դասվում են առաջին խմբի անտառների շարքին, ինչը նշանակում է, որ Հայաստանում 2-րդ խմբի անտառներ չկան:

2. Նախագծի 2-րդ հոդվածով ներկայացված առաջարկը ենթադրում է Հայաստանի Հանրապետության անտառների՝ ըստ հիմնական նպատակային նշանակության դասակարգման ընդհանուր վերանայում, որն էլ իր հերթին ենթադրում է ամբողջ անտառային օրենսգրքում մի շարք միմյանց փոխկապակցված հոդվածների վերանայում ևս:

Դեռևս 10-12 տարի առաջ կազմված անտառակառավարման պլաններով Հայաստանի Հանրապետությունում առանձնացվել էին շուրջ 96000 հա արտադրական նշանակության անտառներ, որոնք չեն նույնականացվել սոցիալական նշանակության (սանիտարահիգիենիկ, առողջարարական, ռեկրեացիոն) անտառների հետ: Նշված սոցիալական նշանակության անտառները ներառված են հատուկ նշանակության անտառների կատեգորիայում (տե՛ս ՀՀ անտառային օրենսգրքի 12-րդ հոդվածը):

Հարկ ենք համարում տեղեկացնել, որ համաձայն «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 650 – Լ որոշման 89.1-ին կետի՝ ներկայումս ՀՀ շրջակա միջավայրի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կողմից մշակվել և քննարկման փուլում է գտնվում «Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որը կառավարության քննարկմանը կներկայացվի սահմանված ժամկետում՝ 2019 թվականի նոյեմ-

բերի առաջին տասնօրյակում: Նախարարության մշակած նախագծում ներառվել են հիմնարար դրույթներ, այդ թվում՝ օրենսգրքի 10-րդ և 11-րդ հոդվածների վերանայում, որը դեռևս մասնագիտական լայն շրջանակների հետ քննարկման կարիք ունի:

Նախարարության կողմից մշակվող նախագիծը Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն արժանանալուց հետո կներկայացվի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի քննարկմանը:

Ելնելով վերը շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է նախագծով քննարկվող՝ ՀՀ անտառային օրենսգրքի գործող հոդվածները թողնել անփոփոխ և, ըստ անհրաժեշտության, նախագծի դրույթներին անդրադառնալ առաջիկայում Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի քննարկմանը ներկայացվելիք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնության քննարկումների շրջանակներում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 սեպտեմբերի 2019 թվականի N 1233 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Վարդան Մելիքյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (*Պ-252-13.08.2019-ՏՏԳԲ-011/0*) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. սեպտեմբերի 3
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-252-13.08.2019-ՏՏԳԲ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-211-Ն անտառային օրենսգրքի (այսուհետ Օրենսգիրք) 11-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«լեռնային կամ 1-ին կամ 2-րդ խմբի անտառները»:

Հոդված 2. Օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասում՝ գ) կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«սոցիալական նշանակության (սանիտարահիգիենիկ, առողջարարական, ռեկրեացիոն)»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

<u>Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի անհրաժեշտությունը</u>

Հայաստանի Հանրապետության անտառները հիմնականում **<u>լեռնային առաջին խմբի պաշտպանական նշանակության անտառներ են,</u>** որոնք ունեն հողապաշտպան, դաշտապաշտպան, ջրապաշտպան, հակաէռոզիոն, ջրակարգավորիչ, հակահեղեղային, հակասելավային և հակասողանքային, քամապաշտպան, սանիտարահիգիենիկ, առողջապահական, գեղագիտական, կլիմայակարգավորիչ, ռեկրեացիոն և **<u>ստրատեգիական գերակա նշանակություն՝ հանդիսանալով էներգիայի աղբյուր:</u>** Անտառներն ակտիվորեն չեզոքացնում են օդակախույթային արդյունաբերական աղտոտումները, հատկապես մաքրում են օդը փոշուց, որը կարողանում են կուտակել հողի մեջ (1 հեկտար անտառը մաքրում է տարեկան 50–70 տոննա փոշի): Անտառներն օդը հարստացնում են թթվածնով, բարձրացնում են օդի հարաբերական խոնավությունը, կարգավորում մթնոլորտային տեղումների քանակը, մեղմացնում

կլիման, բարերար ազդեցություն թողնում շրջակա դաշտերի բերքատվության և մարդու առողջության վրա:

Ավելորդ չէ նշել, որ Սովետական միության տարիներին Հայաստանում **<u>արտադրական նշանակության՝</u>** բնափայտի շարունակական արտադրությունն ապահովվող անտառներ չենք ունեցել, որը հիմնավորվում է ՍՍՀՄ 1977թ.-ի հունիսի 17-ի օրենքով: Օրենքի 15-րդ հոդվածում անտառները հստակ դասակարգվում են 1-ին, 2-րդ և 3-րդ խմբերի, որտեղ 1-ին և 2-րդ խմբերում ընդգրկված են նաև պաշտպանական՝ լեռնային բարձր թեքությունների վրայի անտառները, իսկ 23-րդ հոդվածում սահմանված են փայտանյութի մթերման կարգերն ըստ 1-ին, 2-րդ և 3-րդ խմբերի անտառների (http://pravo.levonevsky.org/baza/soviet/sssr4153.htm):

ՀՀ գործող անտառային օրենսգրքի հոդված 11-ով սահմանվում է, թե որոնք են պաշտպանական նշանակության անտառները, մասնավորապես 1-ին մասի բ) կետով՝ բարձր թեքության (30 աստիճանից ավել) վրա գտնվող անտառները: Տարօրինակ է այն փաստը, որ օրենսգրքում ոչ մի տեղ չի նշվում ՀՀ բնական (վայրի) անտառների լեռնային լինելը և այս պարագայում պաշտպանական նշանակության հիմնավորումներից մեկը համարվում է 30 աստիճանից ավել թեքությունը: Օրենսգրքում այսպիսի ձևակերպման պատճառը անհասկանալի է՝ միտումնավոր է արվել, թե օրենքը գրողների ոչ մասնագետ լինելու արդյունքն է: Այս ձևակերպումը հնարավորություն է ստեղծել **անտեսել** Հայաստանի անտառների՝ *<u>լեռնային առաջին խմբի պաշտպանական</u>* նշանակություն ունենալու անհերքելի փաստը, որն անտեսելով՝ անտառներում իրականացվել են նաև արտադրական նպատակներով հատումներ՝ հիմք ընդունելով մինչև 30 աստիճան թեքության պահանջը:

Նշենք ***<u>1-ին խմբի</u>*** անտառներին դասվելու կոնկրետ մեկ փաստ՝

Արծվաբերդի անտառտնտեսության 2008թ. Անտառկառավարման պլան

http://forestcommittee.am/wp-content/uploads/2018/12/%D4%B1%D6%80%D5%AE%D5%BE%D5%A1%D5%A2%D5%A5%D6%80%D5%A4.pdf

Էջ 37 . - ԳԼՈՒԽ 3. ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՈՂԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1.1. Անտառի խումբը և կատեգորիան

Համաձայն Հայաստանի Հանրապետության Նախարարների Խորհրդի 28.11.1965թ. թիվ 332 որոշման Արծվաբերդի անտառտնտեսության անտառները ***<u>դասվել են 1-ին խմբի</u>*** անտառներին:

Անհրաժեշտ է հաշվի առնել մի խիստ կարևոր հանգամանք, այն է՝ օրինակ անտառվերականգնման կամավոր ընտրովի հատումների ժամանակ արտադրական նշանակության՝ շինափայտի (գերան) կամ տեխնոլոգիական փայտի ելք հնարավոր է լինի, բայց սա չի կարող հիմք հանդիսանալ, որ Հայաստանի անտառների որոշ հատվածներ արտադրական նշանակության (կատեգորիայի) դասակարգվեն:

Աղավաղվել է նաև անտառավերականգնման միջանկյալ (խնամքի) հատումներ սահմանումը, որն իրականացվում է 4 փուլով՝ լուսավորության, մաքրման, նոսրացման և անցումային հատումներով՝ որոնք կատարվում են արտադրական նշանակության անտառներում և անտառտնկարկներում, իսկ այսպիսի հատումները պաշտպանական նշանակության անտառներում արգելվում են՝ օրենսգրքի հոդված 11–ի 2-րդ մասի համաձայն՝ ***<u>պաշտպանական նշանակության անտառներում արգելվում է անտառավերականգնման հատումների իրականացումը</u>***: Հարկ է նշել, որ արտադրական նշանակության անտառներն են՝ բնափայտի շարունակական արտադրությունն ապահովող անտառները, որոնք չեն դասվում հատուկ և պաշտպանական նշանակության անտառների շարքին:

Հիմնական սխալի պատճառն այն է, որ հիմք է ընդունվել օրենքում թերի ձևակերպված՝ մինչև 30 աստիճան թեքության պահանջը, անտեսելով լեռնային դասակարգումը, որն էլ թույլ է տվել օրինակ 20 կամ 29 աստիճան թեքության հատվածներում իրականացնել արտադրական

նշանակության անտառավերականգնման՝ այսպես կոչված միջանկյալ(խնամքի) հատումներ: Այսինքն ստացվում է, որ Հայաստանի լեռնային անտառներում նույնիսկ կտրուկ թեքությունից հետո ասենք 0.5 հա 20 աստիճան թեքությամբ տարածք լինի, կարելի է արտադրական նշանակության՝ անտառվերականգնման հատումներ իրականացնել՝ **մոռանալով**, որ այդ 20 աստիճան թեքությամբ տարածքը **լեռների վրա է և ոչ՛ հարթավայրի:**
Ստորև ներկայացնենք հիմնավոր և անհերքելի փաստեր, որոնք ապացուցում են Հայաստանի անտառների՝ լեռնային առաջին խմբի պաշտպանական նշանակության կատեգորիան, ինչպես նաև ***Անտառային նոր օրենսգրքի /ընդունված 24.10.2005 թ./*** 10-րդ հոդվածի 1-ին մասի գ) կետով սահմանված, այն է՝ «արտադրական նշանակության» նոր կատեգորիայի արհեստական և անհիմն լինելը, որն իրականությանը բացարձակ չի համապատասխանում, քանի որ Հայաստանում **չի՛ եղել** և **չունե՛նք** արտադրական նշանակության անտառներ:
Տեղեկատվության համար հիմք է հանդիսացել «Հայանտառ» ՊՈԱԿ-ն անտառտնտեսությունների 2007-2008թ.թ.-ի հաստատված անտառկառավարման (անտառշինական) պլանները: Ներկայացնենք մեջբերումներ այդ անտառկառավարման պլաններից, որն անմիջականորեն կապված է օրենքի նախագծի հիմնավորման հետ, մասնավորապես՝

<u>Արծվաբերդի անտառտնտեսության 2008թ. Անտառկառավարման պլան</u>
http://forestcommittee.am/wp-content/uploads/2018/12/%D4%B1%D6%80%D5%AE%D5%BE%D5%A1%D5%A2%D5%A5%D6%80%D5%A4.pdf

Էջ 37 . - ԳԼՈՒԽ 3. ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՈՂԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ
1.2. Անտառի խումբը և կատեգորիան
Համաձայն Հայաստանի Հանրապետության Նախարարների Խորհրդի 28.11.1965թ. թիվ 332 որոշման Արծվաբերդի անտառտնտեսության անտառները ***<u>դասվել են 1-ին խմբի</u>*** անտառներին: Նախորդ անտառշինությունը (1988թ) իրականացվել է՝ հիմք ընդունելով ՀՀ Նախարարների Խորհրդի 19.04.1982թ թիվ 266 որոշմամբ անտառներն ըստ պաշտպանական կատեգորիաների բաժանումը, համաձայն որի անտառները դասակարգվել են՝
- Ավտոճանապարհների երկայնքով պաշտպանիչ գոտի – 356հա /0,9%/
- Շրջակա միջավայրի պաշտպանության համար կարևոր նշանակություն ունեցող
- այլ անտառներ – 35845հա /93,6%/
- Քաղաքների արդյունաբերական ձեռնարկությունների և այլ բնակավայրերի

շրջակա կանաչ գոտի– 2119հա /5,5%/, այդ թվում կանաչ գոտու անտառպուրակային մաս – 317հա /0,8%/ :
Նախկին անտառային օրենսգրքով /1994թ./ անտառները դասակարգվել են
- Պաշտպանական նշանակության անտառներ /ջրապաշտպան, հողապաշտպան անտառներ/:
- Սոցիալական նշանակության անտառներ /սանիտարահիգիենիկ, առողջարարական, հատուկ նշանակության անտառներ/ :
- Հատուկ նշանակության անտառներ

Անտառային նոր օրենսգրքով /ընդունված 24.10.2005 թ./ սահմանված է անտառների ըստ նպատակային նշանակության նոր դասակարգում, համաձայն որի անտառները դասակարգվում են՝
1. Պաշտպանական նշանակության անտառներ
2. Հատուկ նշանակության անտառներ
3. Արտադրական նշանակության անտառներ
Արտադրական նշանակության ընդհանուր հողատեսքերը զբաղեցնում են 15852,3հա, այդ թվում՝ անտառածածկը 14479,2 հա, որից ***<u>բնական անտառները</u>*** 14217,6հա և անտառմշակույթները 261,6հա:

Էջ 91.- Համաձայն Հայաստանի անտառային օրենսգրքի և անտառային տնտեսության կառավարման պլանների հրահանգի *<u>անտառվերականգնման հատումները նշանակվում են</u>*

բացառապես արտադրական նշանակության անտառների հասուն և գերհասուն ծառուտներում, իսկ դրանց անբավարարության դեպքում նաև հասունացող ծառուտներում, որոնք հատման ժամանակ անցնում են հասուն խմբի մեջ:

Էջ 96. - Ըստ հատման տեսակների վերլուծելիս համաձայն անտառնտեսության հաշվետվության, մատղաշի խնամքը կատարված է նախատեսվածի սահմանում, իսկ նոսրացման և անցումային հատումները ***եռակի և ավելի գերազանցված է, թեև կատարման իսկությունը և որակը հնարավոր չէր պարզել:***

Էջ 125. - Տարածաշրջանի առանձնապես բարձր թեքության լանջերի անտառների որոշ տարածքներում իրականացված ինտենսիվ հատումների արդյունքում ակտիվացել են էրոզիոն պրոցեսները, ստեղծելով բնապահպանական տեսանկյունից աղետալի վիճակ:

Էջ 161. - Եզրակացություն նախորդ անտառտնտեսվարման վերաբերյալ
Սերմնային վերականգնումը անմխիթար է, որն արդյունք է անտառում անասունների արածեցման, հատկապես գյուղամերձ տարածքներում, որը հանգեցրել է բնական մատղաշի ոչնչացմանը: Հասուն և գերհասուն ծառուտների ընդամենը 34.5%-ն է ապահովված հուսալի մատղաշով, իսկ գլխավոր տեսակով ընդամենը 24.5%-ը,
Դաշտային ուսումնասիրությունների արդյունքներով 1978-2005թթ. անտառի սաղարթի տակ հիմնված շուրջ **2000** հեկտար ընդհանուր մակերեսով անտառմշակույթներից հայտնաբերվել է ընդամենը 145.3 հեկտարը, որից 63%- ը/91.4հա/ գնահատվել է **անբավարար:**

Էջ 162.
Նախորդ անտառշինության ժամանակ շինափայտի ելքը անտառվերականգնման հատումների ժամանակ հաճարկուտներում և բոխուտներում սահմանվել է գրեթե հավասար, որը հատկապես հյուսիսային Հայաստանի բոխուտներում իրատեսական չէ և բնականաբար չի կատարվել:

Գուգարքի անտառտնտեսության 2008թ. Անտառկառավարման պլան
http://forestcommittee.am/wp-content/uploads/2018/12/%D4%B3%D5%B8%D6%82%D5%A3%D5%A1%D6%80%D6%84.pdf

Էջ 13. - Լեռնագրության, ռելիեֆի և հողերի բնութագրեր
Անտառտնտեսության տարածքում ռելիեֆը բնութագրվում է խիստ կտրտվածությամբ և լանջերի դիրքադրության կտրուկ փոփոխականությամբ: Գերակշռում են հյուսիսային դիրքադրության լանջերը, սակայն անկախ կողմնադրություններից՝ գերակշռող են 260--300 թեքության լանջերը:

Էջ 14. - Լանջերի մինչև 100 թեքությունների վրա գտնվում է տարածքի 1.4%-ը, իսկ տարածքի 84.2%-ը գտնվում է 21°-ից բարձր թեքությունների վրա:

Էջ 47. - Անտառածածկ մակերեսի բաշխվածությունն ըստ լանջի թեքության
Անտառածածկ տարածքի ընդամենը 1.4%-ը (311.4հա) և պաշարի 0.8%-ն (1904խմ) են գտնվում մինչև 10° թեքությունների վրա, 31° և բարձր թեքություններում տեղաբաշխված են 6138.9հա անտառներ, իսկ անտառների գերակշռող մասը գտնվում է 21-30° թեքությունների վրա՝ 12264.4հա մակերեսով

Էջ 34. - Անտառի խումբը և կատեգորիան
Պաշտպանական նշանակության անտառային հողերի ընդհանուր մակերեսը զբաղեցնում է ընդհանուր տարածքի 42.6%-ը (13536հեկտար
Հատուկ նշանակության անտառային հողերը զբաղեցնում են 9479,1հա (34.8%),
Արտադրական նշանակության ընդհանուր հողատեսքերը զբաղեցնում են 7205.8 հեկտար (22.6%), նույն թվում անտառածածկը 6401,4հեկտար (88.8%), որից *բնական անտառները* 6204,4 հեկտար

Էջ 86. Խնամքի հատումներ
Ստուգիչ շրջանում անտառտնտեսությունում կատարված կառուցվածքային փոփոխությունների և ստուգիչ շրջանում խնամքի հատման գիրքը սահմանված կարգով չլրացնելու, ինչպես նաև անտառօգտագործման տոմսերով հատումներ նշանակած հատվածները իրականությանը չհամապատասխանելու և ինտենսիվ չհամակարգված հատումների կատարման հանգամանքներով խնամքի հատում նշանակված տարածքներում հնարավոր չէր պարզել նախկին տարիներին կատարված հատումների որակը և կատարվել է միայն անտառի ընդհանուր վիճակի, նաև ծառուտի կազմի փոփոխության ընդհանրական վերլուծություն:
Համաձայն անտառտնտեսության պաշտոնական հաշվետվության մատղաշի խնամքը կատարվել է նախատեսվածի սահմանում, իսկ նոսրացման և անցումային հատումները գերազանցված են, թեև չհամակարգված ծավալուն հատումների հետևանքով կատարման իսկությունը և որակը հնարավոր չէր պարզել:

Էջ 93. - Անտառպաշտպանական միջոցառումներ
Ուսումնասիրությունների արդյունքներով 1991 հեկտարի վրա հայտնաբերվել է 20500խմ. ընդհանուր պաշարով ծառեր և նախատեսվել է սանիտարական հատում: Նշված պաշարից իրացման ենթակա պաշարը գնահատվել է 10000խմ, որից շինափայտը 2000խմ:

<u>ԳՈՐԻՍԻ ԱՆՏԱՌՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ 2007</u>
http://forestcommittee.am/wp-content/uploads/2018/12/%D4%B3%D5%B8%D6%80%D5%AB%D5%BD.pdf

Էջ 16
Լեռնագրության, ռելիեֆի և հողերի բնութագրեր
Գորիսի անտառտնտեսության անտառները գտնվում են *Փոքր Կովկաս լեռնահամակարգի Զանգեզուրի լեռնաշղթայի լեռնաբազուկների վրա՝* հարավ- արևելյան և հյուսիս-արևմտյան անտառտնտեսական շրջանում: Անտառտնտեսության տարածքն աչքի է ընկնում խիստ կտրտված լեռնային ռելիեֆով՝ ընդգրկելով Որոտան գետի և նրա վտակների ջրահավաք ավազանները:
Լանջերի մինչև 100 թեքությունների վրա գտնվում է տարածքի 0,6%-ը, իսկ տարածքի **78%-ը գտնվում է 210 -ից բարձր թեքությունների վրա**:

Էջ 35
3.1. Անտառի խումբը և կատեգորիան
Համաձայն Հայաստանի Հանրապետության Նախարարների Խորհրդի 28.07.1985թ. թիվ 332 որոշման **Գորիսի անտառտնտեսության անտառները դասվել են 1-ին խմբի անտառներին:** Նախորդ անտառշինությունը (1989թ) իրականացվել է՝ հիմք ընդունելով ՀՀ Նախարարների Խորհրդի 19.04.1982թ թիվ 266 որոշմամբ անտառներն ըստ պաշտպանական կատեգորիաների բաժանումը, համաձայն որի անտառները դասակարգվել են՝
-Կանաչ գոտու անտառներ
- Շրջակա միջավայրի պաշտպանության համար կարևոր նշանակություն ունեցող այլ անտառներ:
Անտառային ***նոր օրենսգրքով*** (ընդունված 24.10.2005 թ.) սահմանված է անտառների ըստ նպատակային նշանակության նոր դասակարգում, համաձայն որի անտառները դասակարգվում են՝
1. Պաշտպանական նշանակության անտառներ
2. Հատուկ նշանակության անտառներ
3. Արտադրական նշանակության անտառներ
Պաշտպանական նշանակության անտառային հողերի ընդհանուր մակերեսը զբաղեցնում է ընդհանուր տարածքի 38.3%-ը՝ 6338,2 հա
Հատուկ նշանակության անտառային հողերը զբաղեցնում են ընդամենը 5114.6 հեկտար (ընդհանուր տարածքի 30.9%-ը)

Արտադրական նշանակության անտառային հողերը զբաղեցնում են ընդհանուր հաշվով 5077,2 հեկտար, (անտառտնտեսության տարածքի 30.7%-ը), որից անտառածածկ մակերեսը զբաղեցնում է 4900.1 հա՝ 29.6%

էջ 45

3.5. Անտառածածկ մակերեսի բաշխվածությունն ըստ լանջի թեքության

Ատառածածկ տարածքի ընդամենը 0.7%-ը (84հա) և պաշարի 0.9%-ն (1164խմ) են գտնվում մինչև 10° թեքությունների վրա, **31° և բարձր թեքություններում** տեղաբաշխված են 3042.4հա անտառներ՝ 259500խմ ընդհանուր պաշարով (համապատասխանաբար 23.8% և 19.2%), իսկ անտառների **գերակշռող մասը գտնվում է 21-30° թեքությունների վրա՝ 7485.4հա մակերեսով** (58.6%), 814510խմ ընդհանուր պաշարով (60.4%),

էջ 79

6.5. Խնամքի հատումներ

Նախորդ ստուգիչ շրջանում իրականացված խնամքի հատումները պարզելու նպատակով ուսումնասիրվել են 1989-2007թթ խնամքի հատումների վերաբերյալ տնտեսություններում առկա հաշվետվությունները: Ստուգիչ շրջանում անտառտնտեսությունում կատարված կառուցվածքային փոփոխությունների և ստուգիչ շրջանում խնամքի հատման գիրքը առանձին տարիներին սահմանված կարգով չլրացնելու, ինչպես նաև անտառհատման տոմսերով հատումներ նշանակած հատվածները իրականությանը չհամապատասխանելու, առանձին տարածքներում ինտենսիվ հատումների հետևանքով խնամքի հատում նշանակված տարածքներում հնարավոր չէր ամբողջությամբ պարզել նախկին տարիներին կատարված հատումների որակը և կատարվել է միայն անտառի ընդհանուր վիճակի, նաև ծառուտի կազմի փոփոխության ընդհանրական վերլուծություն: (Աղյուսակ 47)

Նախորդ ստուգիչ շրջանում նախագծված են եղել խնամքի հատումներ ընդամենը 225 հա-ի վրա, այդ թվում՝ մատղաշի խնամք՝ (լուսավորման և մաքրման հատում) 63հա-ի վրա, նոսրացման հատումներ՝ 43հա-ի վրա՝

Նախագծվել են անցումային հատում 813.7հա մակերեսի վրա, հատվող ընդհանուր պաշարը 17312խմ,

էջ 94

Միաժամանակ առաջարկվում է անտառի բնական վերաճին օգնդակելու նպատակով ցանկապատի կառուցում՝ մետաղյա փշալարով, 19000գծմ ընդհանուր երկարությամբ, որով շուրջ 4500հա անտառային հողերում կկանխվի անասունների մուտքը և նպաստավոր պայմաններ կստեղծվեն անտառի բնական վերականգնման համար

<u>ԼԱԼՎԱՐԻ ԱՆՏԱՌՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ 2008</u>

http://forestcommittee.am/wp-content/uploads/2018/12/%D4%BC%D5%A1%D5%AC%D5%BE%D5%A1%D6%80.pdf

էջ 9

Լալվարի անտառտնտեսությունը (նախկինում գտնվում էր Ալավերդու անտառտնտեսության կազմում) կազմավորվել է 1931թ., նախկին Միութենական Ժողկոմանտառի անդրկովկասյան անտառի և թղթի միավորման կազմում: 1937թ. Ալավերդու անտառտնտեսությունը վերակազմավորվել է անտառարդտնտեսության, իսկ ՀՀ Նախարարների խորհրդի 09.11.1976թ. թիվ 588 որոշմամբ, հաշվի ***առնելով անտառների առաջին խմբին պատկանելու*** և բնապահպանական կարևորագույն ֆունկցիաները, վերակազմավորվել է Թումանյանի անտառտնտեսության 4 անտառպետությունների կազմով՝ Շնողի, Շամլուղի, Ալավերդու և Դսեղի:

էջ 12

1.1. Լեռնագրության, ռելիեֆի և հողերի բնութագրեր Լալվարի անտառտնտեսության անտառները գտնվում են Փոքր Կովկաս լեռնահամակարգի կենտրոնական հատվածում

հյուսիսային անտառտնտեսական շրջանում, Լալվարի և Հայկական լեռնաշղթաների լանջերին: Բարձր գագաթը Լալվարն է՝ 2543մ:

ՋԻԼԻԶԱՅԻ ԱՆՏԱՌՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ 2008
http://forestcommittee.am/wp-content/uploads/2018/12/%D5%8B%D5%AB%D5%AC%D5%AB%D5%A6%D5%A1.pdf

Էջ 15
1.2. Լեռնագրության, ռելիեֆի և հողերի բնութագրեր
Անտառտնտեսության տարածքում ռելիեֆը բնութագրվում է չափազանց խիստ կտրտվածությամբ և լանջերի դիրքադրության հաճախակի փոփոխմամբ: Անկախ կողմնադրությունից, գերակշռում են 210-300 թեքության լանջերը, որոնք կազմում են տարածքի մոտ 48.6%-ը:

Էջ 32
3.1. Անտառի խումբը և կատեգորիան
Համաձայն Հայաստանի Հանրապետության Նախարարների Խորհրդի 28.07.1985թ. թիվ 332 որոշման Ջիլիզայի անտառտնտեսության անտառները դասվել են 1-ին խմբի անտառներին: Նախորդ անտառշինությունը (1988թ) իրականացվել է՝ հիմք ընդունելով ՀՀ Նախարարների Խորհրդի 19.04.1982թ թիվ 266 որոշմամբ անտառներն ըստ պաշտպանական կատեգորիաների բաժանումը, համաձայն որի անտառները դասակարգվել են՝
. Կանաչ գոտու անտառներ
. Շրջակա միջավայրի պաշտպանության համար կարևոր նշանակություն ունեցող այլ անտառներ:
Անտառային նոր օրենսգրքով (ընդունված 24.10.2005 թ.) սահմանված է անտառների ըստ նպատակային նշանակության նոր դասակարգում, համաձայն որի անտառները դասակարգվում են՝
1. Պաշտպանական նշանակության անտառներ
2. Հատուկ նշանակության անտառներ
3. Արտադրական նշանակության անտառներ

ՍԵՔԱՐԻ ԱՆՏԱՌՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ 2007
http://forestcommittee.am/wp-content/uploads/2018/12/%D5%8D%D6%87%D6%84%D5%A1%D6%80.pdf

Էջ 11
1.6. Լեռնագրության, ռելիեֆի և հողերի բնութագրեր
Սևքարի անտառտնտեսության անտառները գտնվում են փոքր Կովկասյան լեռնաշղթայի հյուսիսային հատվածում՝ Հայաստանի հյուսիս-արևելյան անտառաճման և անտառտնտեսական շրջանում: Անտառտնտեսության տարածքը կազմավորվել է փոքր Կովկասյան լեռնաշղթայի Ոսկեպարի, Կիրանցի, Մթնասարի և Իջևանի լեռնաբազուկներից, որոնք տարածվում են հյուսիս-արևելյան ուղղությամբ՝ աստիճանաբար ցածրանալով հարավից հյուսիս:

Էջ 12
Սևքարի անտառտնտեսության տարածքում ռելիեֆը բնութագրվում է խիստ կտրտվածությամբ և լանջերի դիրքադրության փոփոխությամբ, որտեղ գերակշռում են հյուսիսային դիրքադրության լանջերը, ընդ որում անկախ կողմնադրություններից **գերակշռում են 21-300 թեքության լանջերը** /նկ.1/

Էջ 30
Առկա փաստաթղթերի ուսումնասիրություններից պարզվել է, որ անտառշինությունը իրականացվել է՝ համաձայն 1-ին կարգի, սակայն առանց ինքնաթիռային լուսանկարների օգտագործման: Վերջինս շատ զարմանալի է, քանի որ նույն ժամանակահավածում առկա են եղել անհրաժեշտ որակի լուսանկարներ, որոնցով կատարվել են Իջևանի և Սևքարի

անտառտնտեսությունների անտառշինությունները: Գույքագրումը կատարվել է բացառապես աչքաչափային մեթոդով, տաքսացիոն քայլերով և առանձնացվել է 73 քառակուսի՝ մեկ քառակուսու միջին մակերեսը 93հա, 1142 հատվածներ՝ միջին հատվածի մակերեսը 5,9 հա: Պաշարը ևս որոշվել է աչքաչափական մեթոդով՝ օգտագործելով գործող ստանդարտ ծավալային աղյուսակները:

Էջ 33

3.1. Անտառի խումբը և կատեգորիան

Համաձայն Հայաստանի Հանրապետության Նախարարների Խորհրդի 28.07.1985թ. թիվ 332 որոշման Սևքարի անտառտնտեսության անտառները դասվել են 1-ին խմբի անտառներին: Նախորդ անտառշինությունը /1988թ/ իրականացվել է՝ հիմք ընդունելով ՀՀ Նախարարների Խորհրդի 19.04.1982թ թիվ 266 որոշմամբ անտառներն ըստ պաշտպանական կատեգորիաների բաժանումը, համաձայն որի անտառները դասակարգվել են.

Կանաչ գոտու անտառներ

Շրջակա միջավայրի պաշտպանության համար կարևոր նշանակություն ունեցող այլ անտառներ:

Ներկա անտառշինությունը իրականացվել է հիմք ընդունելով Անտառի Օրենսգիրքը /1994թ/, համաձայն որի Սևքարի անտառտնտեսության անտառներն ըստ պաշտպանական կատեգորիաների բաժանվել են.

. Պաշտպանական նշանակության անտառներ /ջրապահպան, հողապաշտպան անտառներ/:

. Սոցիալական նշանակության անտառներ /սանիտարահիգիենիկ, առողջարարական, ռեկրեացիոն նշանակության անտառներ/ /աղ.12, քարտեզ- սխեմա4/:

Էջ 38

Անտառտնտեսության անտառների 49.8%-ը և ընդհանուր պաշարի 48.7%-ը տեղաբաշխված են 21-30"

թեքության լանջերին, մինչև 20" թեքությունների վրա գտնվում են անտառների 15.3 և պաշարի 12.2%-ը, իսկ 36" -ից բարձր խիստ զառիթափ լանջերի վրա գտնվում են անտառների 14.4 և պաշարի 17.4%-ը /աղ.14, գրաֆիկ 2, քարտեզ- սխեմա 6,7/:

..... **և այլ անտառտնտեսություններ:**

Հայաստանում վերջին 20 տարում օգտվել են օրենսգրքի հոդված 11-ի 1-ին մասի բ) կետի ոչ մասնագիտական, անհիմն ձևակերպումից և առանց այդ էլ մութ ու ցուրտ տարիներին գերշահագործված անտառները առ այսօր հատվել են նպատակային նշանակությանը անհամապատասխան և անարդյունավետ (Արցախյան պատերազմի տարիներից մինչև 1998թ.-ը կարելի է հասկանալ, բայց դրանից հետո՝ ոչ՛): Վերջին 20 տարիներին Օրենսգրքի հոդված 11-ի բ) և գ) կետերի դրույթները բազմաթիվ դեպքերում չեն պահպանվել, որում համոզվելու համար կարելի է ընտրանքային ուսումնասիրել վերջին 7-8 տարիներին շահագործված հատատեղերի փաստաթղթերը հետևյալ ցուցանիշների մասով՝ ծառատեսակ, ծառի բնի տրամագիծ, հատման եղանակ, շինափայտի ծավալ և ընտրված հատատեղերի համապատասխանությունը Օրենսգրքի պահանջներին: Ավելորդ չէ նշել նաև մի պարադոքսալ երևույթ՝ հատատեղերը շահագործելու համար, որոշ տարածքներում մինչև հատատեղ, թրթուրավոր տրակտորով բացել են ճանապարհներ՝ հաշվի չառնելով վերոնշյալ պահանջները և հատվել են ավելի շատ քանակի ծառեր, քան նախատեսվել է օրինական հատատեղում:

Ակնկալվող արդյունքը

Օրենսգրքում առաջարկվող փոփոխությունները և լրացումները իրականացնելուց հետո կբացառվի Հայաստանի լեռնային առաջին խմբի բնական անտառների անհիմն, ոչ մասնագիտական և անարդյունավետ շահագործումը:

Բոլոր դեպքերում Հայաստանի անտառները գերշահագործվել են և այդ վնասները հնարավոր կլինի վերականգնել 30-40 տարում՝ խելամիտ, արդյունավետ, անտառագիտությանը համապատասխան մանագիտական միջոցառումներ և օրենսդրական փոփոխություններ իրականացնելով, այլապես սերունդներին կփոխանցենք անկենսունակ, բնական պաշարներով աղքատ, դեգրադացված և անտառազուրկ տարածքներով գերակշռող անտառներ: